


ՀԱՆԴԵՍ ԹԱՏԵՐԱԿԱՆ



ԽԱՂԱՄՈԼ

(Տես յէջ 314)

ՀԱՆԴԵՍ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

(Տեսարանը կը բացուի երաժշտութեամբ և պարով. երգողը և պարողը են Փարեզին, Սեպուհ, Ներսէս, Աշոտ, Տիւրան, Հրահատ, Յարօ և Երաժիշտ. մէջտեղ դրուած է գինի և քաղցրեղենք. քովընտի երկու սեղաններու վրայ՝ երկու ձեռք քարտ. պարը կը շարունակուի աշխուժիչ, և պարաստրք գաւաթներն ձեռքերնին՝ կը խմեն ամէն մէկն Փարեզինի կենաց և քախտասոյ՝ րոտեմով)։

Փարեզին. — Ապրիլ, աղնիւ բարեկամներս. ուրախանա՛նք միշտ այսպէս. Այն քախտը որ ես ունեցայ երէկ իրիկուն՝ ձեր ամէն մէկուն համար կը փափաքիմ՝ որ դուք ալ ունենաք. Բայց մենք ամէնքս եղբայր ենք. իմ շահածս ձերն է և ձեր շահածս ալ իմն կը համարիմ... Կեցցէ՛ մեր բարեկամութիւնը. փմնե՛ք, (կը խմեն)։

Ներսէս. — Պարոն Փարեզին, դուն մեր բարեկամութեան հոգին ու կապն ես... բախտը որ քեզ ծիծաղի՛ մեր բարեկամութիւնն ալ քեզմով կը ծիծաղի. անոր համար ես կ'առաջարկեմ մեր բարեկամներուն՝ յատուկ ձեր կենաց և բախտին համար խրմենք դարձակներ մեր բաժակները... Կեցցէ՛,

կեցցէ՛, կեցցէ՛ միշտ մեր սիրելի Փարեզին բարեկամն։

Խաղակիցք. — Կեցցէ՛, կեցցէ՛ պարոն Փարեզին. (կը դատարկեն բաժակները)։

Փարեզին. — Սիրելի բարեկամներ, շնորհակալ եմ ձեր բարի մաղթանքներին և ուրախութեան իմ ունեցած բախտի մասին. բախտը որ մէկ մը սկսի բացուիլ ճամբայ ելլել, շողկառքի նման իր ետեւէն կը քաշէ շատ մը ուրիշ կառքեր. Կան շատ յիմարներ, որոց համբանքն զօրս չէ դժբախտաբար նաև Սմբատ եղբայրս, որ խաղը միշտ կորուստ ընելու խանութ կը կարծեն. չեն իմանար թէ խանութպանն ամէն օր չի վաստակիր, այլ շատ անգամ մեծ կամ փոքր կորուստներ ալ կ'ունենայ. բայց օր ալ կու գայ՝ այնպիսի յաջող առուտուր մը՝ կ'ընէ՛ որ բոլոր կորուստները մէկ անգամով վաստակելէն զատ՝ լաւ շահ ալ կ'աւելցընէ... Միթէ խաղալու խանութն ալ այսպէս չէ՛, բարեկամք։

Խաղակիցք. — Ի հարկէ այնպէս է Սեպուհ. — Ներեցէք, պարոն Փարեզին, կարելի՞ է արդեօք հարցընեմ՝ թէ քնչպէս եղաւ որ հանդիպեցաւ ձեզի երէկ իրիկուն ռուս իմանը Լիւմաիսայի մէջ. ես ու շացայ գալու, հասած տոնեն արդէն խեղճը բռներ կը տանէին... այսօր լսեցի որ նա հետո երկիրներ գնացող գաղթականաց մէջ խառնուելով՝ Ռուստովէն մեկնեւ է...

Աշոտ. — Է՛հ, պարոն Սեպուհ, ես քեզի պատմեմ թէ ինչպէս եղաւ. որովհետեւ

բանն ինծմով նախ սկսաւ, և ես եղայ հաւուն մէկ թւը կրծողը. իսկ Գարեգին պարարտ մասերը, լեղին ու թոքն ու փորոտիքը լափեց, մէկ խօսքով՝ ամբողջ հաւը կուտաւ...

Սեպտեմբ. — Ո՞վ էր այդ հաւն, պարոն Սեպտեմբ.

Սեպտեմբ. — Այդ հաւն էր առա իվանն, որ հաւի չափ ալ խելք չունի. իվանն՝ աշխատասէր և շատ խնայութիւն ընող ծերունի բեռնակրի մը որդին է. այդ խեղճ բեռնակիրն եղբայր մ'ալ ունի՝ որ հասարակ կօշիկներ կարող է. բայց զաւակ չունենալով՝ որդեգրած է իվանին, որ հետեւաբար ժառանգ է թէ՛ բեռնակրին և թէ՛ կօշիկարին։ Այդ յիմար իվանն անցած օր լսած բլլալով՝ որ մեր Պր. Հրահատը գիշերուան մը մէջ խաղալով 560 մանէթ շահեր է լիվատիայի մէջ, խելքը գլխէն կ'երթայ. « Ի՛նչ, կ'ըսէ, ինչ ծառութիւն է իմ հօրս ու հօրեղբորս ըրածը. իրենց կենաց վաթսուց տարիներն անցուցեր են, և հազիւ թէ հազար ու մէկ քրտիք միասին թափելով՝ կրցեր են 8000 մանէթի տէր դառնալ, քանի որ Հրահատ գիշերուան մը մէջ 560 մանէթ աշխատեր է խաղալով. որ է ըսել՝ եթէ ես ալ խաղամ, տասն և հինգ օրուան մէջ հօրս ու հօրեղբորս վաթսուց տարիներու մէջ աշխատածը առանց մէկ նեղութեան պիտի վատրելիմ »։ այս կ'ըսէ, և երէկ իրիկուն Զնուտն 5000 մանէթ փոխ առնելով՝ երկրորդ օրը հատուցանելու պայմանաւ՝ զրաւ կը դնէ իրենց ունեցած չունեցածը՝ հօրն ու հօրեղբորը վաթսուց տարիներու մէջ աշխատածը, և շիտակ կու գայ լիվատիա խաղացող մը փնտռելով՝ որ ձեռքը իրեն պէս պատրաստ առատ դրամ ունենայ... Բախտը բերաւ որ ինծի նախ հանդիպեցաւ, և հարցուց թէ մ'ըստեղ կը գտնուէին հարուստ խաղացողներ. ես ինքզինքս առաջարկեցի իրեն հետ խաղայու. նստանք և 20 մանէթ զրինք իրեւ փորձ իրարու դիմ իմանալու համար. քովս աւելի դրամ չունէի՝ թէ չէ աւելի կը վատրէի. վասն զի երբ ես յաղիկեցի և առաջարկեցի 40 մանէթով սկսիլ երկրորդ պարտիս, ինքը բարձրացուց 400 մանէ-

թի. և որովհետեւ ես այդչափ փող չկարողացայ գտնել, յանձն չտուաւ ինծի հետ շախմատակելու. բայց բուն պատճառն այն էր՝ որ իրեն միտքն էր միայն վատարկել և ոչ թէ կորսնցնել. հասկըցայ. ուստի զինքը առի մեր ընկերաց մօտ բերի. բարեբախտաբար Պր. Գարեգինի մօտ կը գտնուէր առատ փող։ Պր. Գարեգինի ականջէն փսփսացի ի վանի մօլ ըլլալն, ինչպէս փող ունենալն, և թէ ինչպէս պէտք էր կ'էիլ այդ յիմարը։ Պր. Գարեգին սկիզբէն սկսաւ թեթեւ կրտստներ ընել՝ կամեաւոր սխալներով, մինչև որ իվան ալ վատահացած իր բախտին վրայ, և ուզելով ու երազելով չէ տասնուհինգ, այլ մէկ գիշերուան մէջ հօր ու հօրեղբորը վաթսուց տարուան վատստակն ընել, իւր մուսիկի յիմարութեամբ 5000 մանէթը մէկ հեղ զրաւ խաղի։ Լաւ որ Զնուտ Պապան պատրաստ փողը գրպանը մեր մօտն էր. Գարեգին զրաւի դրաւ իր հայրենի տունն, ու փոխ առնելով՝ խաղի դրաւ... Իրաւ մեծ անխոհեմութիւն էր, բայց բախտ ըծուածն ալ շատ անգամ անխոհեմութեամբ բարեկամը կ'ըլլայ. մէկ խաղով իվանը կորսնցնցուց իւր 5000 մանէթի գումարը, որ երկրորդ օրը Զնուտին պիտի հատուցանէր, և կամ բանաւ մտնելով՝ հայրը տուգանքի պիտի ենթարկէր։ Զնուտ Պապան սկսաւ իվանէն իր փողը պահանջել. իսկ երբ իվան յիմարած՝ չէր գիտեր ընելիքը և յուսահատութեան մէջ փախչիլ կը մտածէր, ահա Զնուտը հստակաւ նուրթեան երկու զինուոր հասցոց, որ բռնեցին իվանը և տարան ծակը գրին...

Սեպտեմբ. — Ճշդ այդ վայրկենին էր որ վրայ հասայ. մնացածն ինծի ծանօթ է, և թէ խեղճն ինչ վերջ ունեցաւ...

Գարեգին. — Ինչ եղաւ։

Սեպտեմբ. — Ինչ պիտի ըլլար. հայրն ու հօրեղբայրն առիպուեցան տուն տեղ՝ ունեցածն ու չունեցածն Զնուտին տալ պարտքի տեղ՝ իրենց մէկ հատիկ արդին բանտէ խալըսելու համար. հազիւ բանտէն ելաւ՝ իվանի հայրը իր ձեռքը գնելով քանի մը մնացորդ ոսկիներ, իր վերջին ապրուստը, հացի օրական փողը, և անէծք ու անէծք՝ կարգալով որդւոյն ու խաղ հնարողին ու խաղ խաղա-

ցոյններուն գլուխներուն, որկեց հեռացոց ի վան որդին՝ իր թնէն ալ, քաղքէն ալ՝ հեռու օտար աշխարհք պանդխտութեան... Այսօր այստեղ եկած առեւն հանդիպեցայ կոշկակար հօրեղբորը. խեղճ ծերուկը վարձեալ իր հին արուեստը ձեռք առեր է, որ տասնութհինգ տարիներէ վեր թողեր էր և հանգիստ կ'ապրէր. աչքերը արցունքով լեցուն էին և երեսին վրայէն թուրի պէս վար կը թափէին. երբեմն երբեմն կը հառաչէր. « Ա՛խ իմաց, ա՛խ թնծած խաղ ու իմանի հօրը վրայաց տեղեկութիւն հարցուցի, ինծի ըսաւ թէ նա ալ իւր ահկերը, որ քսան տարիներէ 'ի վեր իրեն անցած կենաց յիշատակին համար՝ տանը մէկ անկիւնը ձգեր թողեր էր, զարձեալ նոյն շալակը իր կրօնակին կապեր է, և կէս ծուած մէջըով ու արցունքն աչքերը և հառաչանքը որտէն անպակաս՝ բեռնակրութիւն բնելով իր օբական դառն հացը կը նարէ... Այսպէս ա՛տա յիմար որդի մը՝ խաղալով, մէկ գիշերուան մէջ հօրը և հօրեղբորը վախճան տարիներու խնայողութիւնները ջուրը ձգեց... »

Գարեգին. — Քիչ առաջ ըսածա է, պարոն Սեպուհ. խանութ մ'է խաղալը. ինչպէս խառնութեանները աշպէս ալ մենք՝ օր կայ որ կը կորսնցընենք, օր կայ որ կը վատարկինք. իմանք կորսնցընուց, Գարեգինը վատարկեցաւ, երկուքին ալ իբրև մէկմէկ խառնութեան հաշուէ... »

Սեպուհ. — Ներեցէք, պարոն Գարեգին, շատ տարբերութիւն կայ խառնութեանի մը շահեղուն և կորսնցընելուն, և խաղացողի մը շահեղուն և կորսնցընելուն մէջ... »

Գարեգին. — Ոչինչ, ամենեւին տարբերութիւն չկայ. այնպէս է՝ ինչպէս մի և նոյն վայրկենին՝ մէկը մեռել մը տնէն գերեզման կը տանի, միւսը հարա մը կը բերէ իր տունը, մէկը փա ըսյ, միւս կը ծիծաղի. աշխարհիս ամէն բանն այսպէս է. ես կը զարմանամ թէ դուք ինչ տարբերութիւն կը տեսնէք խառնութեանին և մեր մէջը :

Սեպուհ. — Շատ և մեծ տարբերութիւն, պարոն Գարեգին. տարբերութիւնն այն է՝ որ խառնութեաններուն շահն աս կուրուստը՝ խելքի, ճարտարութեան և տեւ

տրական օրինաց և դէպքերու արդիւնք են. իսկ խաղացողաց շահն ու կորուստը միայն կոյր բախտի արդիւնք են, և շատ անգամ նաեւ նենգաւոր խորամանկութեանց և խաբէութեանց, որ արգիլուած և պատժուած են ամէն երկրի օրէնքներէ. ուստի խանութ, պաններուն շահն ալ և կորուստն ալ պատուաւոր են, իսկ խաղացողների շահն ալ կորուստն ալ անպատու... »

Գարեգին. — Անպատուութիւնը ո՞րն է. աշխարհիս մէջ ամէնքն ալ մէկը միւսին փաստով կը շահուին, և հակառակն ալ կարելի է. մինչև օր մէկը չկորսնցընէ՝ միւսը չէ կորցը շահուիլ... »

Սեպուհ. — Այդ խօսքովդ, պարոն Գարեգին, այնպէս կրնայ հասկըցուիլ՝ որ քեզի համար անպատու գործ չէ՝ երբ որ աւագակ մը ճանապարհի վրայ հանդիպածին կողոպտէ, և եթէ հարկ ըլլայ նաեւ սպաննէ, որովհետեւ իւր շահն այնպէս կը պահանջէ, որ ուրիշին փաստով պէտք է վատակի... »

Գարեգին. — Երբ ստիպուած է իւր շահուն համար այնպէս բնել, այո՛, բնաւ անպատու գործ չէ բրածը. միթէ բնութեան մէջ գտնուած ամէն անասուններն ալ այնպէս չեն բնել. բնութեան օրէնք է՝ որ տկարը զօրաւորին պէտք է զոհուի... »

Սեպուհ. — Ուրեմն դուք, Գարեգին, մարդ ալ անասունը օրինաց տակ կը ձգես և անոնց դառնէ կը համարիս :

Գարեգին. — Ի հարկէ, Սեպուհ, մարդ ալ քան զմարդներն աւելի ճարտարագոյն և աւելի խելացի անասուն մ'է, ու չինչ աւելի... իսկ Սմբատին որ հարցընես՝ կ'ըսէ թէ հօգի ալ ունի, չեմ գիտեր դեռ ուրիշ ինչ անտեսանելի բաներ ալ ունի... բայց ես դեռ այնպիսի անոնցներ չեմ գտած՝ որ այդպէս բաներ տեսած ըլլամ մարդուն մէջ... »

Ներսէս. — Ո՛հ, պարոն Գարեգին, պարոն Սեպուհ, այդ տեսակ խօսքերու աւանն չէ. քունս սկսաւ զալ ձանձորութենէս : մենք մեր ուրախութիւնը նայինք, արիւնք բուն թողաւք իրենց եղբայնկութեան վրայ հոգ տանիլ... »

Գարեգին. — Ապրիս, պարոն Ներս

սէս. մենք խաղալու զուարճանալու եկեր ենք. մինչև հիմա խաղալէն փաստ չենք տեսած. եթէ փաստ տեսեր ենք՝ վատապալ ալ տեսեր ենք. մենք յայտնի է խանութպան Գուրգեն չենք կարող ընել. մեր խանութն ալ այս է. ուրեմն խաղանք, բարեկամներ, խաղանք. և խաղ սկսելնէս առաջ՝ մի մի բաժակ զարտրկենք խաղը հնարողին օրհնեալ յիշատակին, փոխարէն այն անէծքներուն որ շատերն իր զլխուն կը թափեն... խմենք. (սակեցը կ'ընդունին զհեծին Յարոյեան և կը խմեն. բաց է Սեպուհէն):

Սեպուհէ. — (Երաժուշտ. — Թէ. ո՞վ է քնչկէս մէկն է Գարեգին՝ հիմա բարոյովին կը սկսիմ հասկընալ, և իրաւունք տալ Սմբատին բոլոր բաժներուն... և դուրս):

Գարեգին. — Ուրեմն սկսինք, բարեկամներ (կը նստին խաղալու). առաջ մտնել թիւերէն...

Թարօ. — (Բաժակ մատուցանելով առ Սեպուհէ) Գուր չէք խմեր, զարոն Սեպուհէ... (Սեպուհէ արհամարհանաբար. Թարօյի վրան կը նայի, և կը հետաւեայ խաղաղողներուն քով. Թարօ Սեպուհէի քսակէն կատաղութեան և սպասեալեաց ձևեր կ'ընէ... դռնը կը զարնոյն):

Գարեգին. — Թարօ, դուրս կը զարնեն, տես ո՞վ է եկողը... Բարեկամներ, զարնեալ բախտի թուղթն իմն է, տուէք (կը ժողովէ փողերը):

Թարօ. — (Վերադառնալով) Պարոն Գարեգին, տէր իմ, աղքատ մ'է եկողը. կը հարցընէ թէ Հրանդ Աւետալի տունն այս է. կը հարցընեմ՝ քնչ կ'ուզես, կ'ըսէ որ իր օրդոյն Սմբատին հետ կ'ուզեմ խօսիլ. փող կու տամ՝ չառներ, հաց կու տամ՝ չառներ, տնձաւոր կ'ուզէ ներս գալ, ըսելիքը չուզեր ինծի...:

Գարեգին. — Զարմանք բան... ըստ լաւ, բոլ թող ներս գայ... Սմբատին տեղը կը ձևանամ՝ թէ որ անծանօթ մէկն ըլլայ, տեսնենք քնչ ծածուկ բան ըսելիք աւնի Սմբատին...:

Թարօ. — Եստ լաւ, տէր իմ... (Կ'երսբայ և ներս կը բերէ մարացիներ):

ՏԵՍԷԼ ԵՐԿՐՈՐԴ

Առաքիններն և Մարազկան Տղայի մատակարարութիւնը:

Սեպուհէ. — (Մարազկանին տնով ելելով) Ի՞նչ կ'ուզես ըսել Սմբատին, պապի...:

Մարազկան. — Հրանդ Աւետալի լաճը. Սմբատը դուն ես...:

Գարեգին. — Ձէ, պապի, ինքը չէ, ես եմ Հրանդ Աւետալի լաճը. քնչ կ'ուզես ինծի...:

Մարազկան. — Գեղնէ՛ առաջ ողորմութիւն կ'ուզեմ քանի մը կարեկ, մինչև որ շտապ ըսելիքս չեմ ըսեր...:

Գարեգին. — Սո՛ւ կախարդ խաղաղութեան նայեցէք, քնչկէս ալ խաբէութեամբ ողորմութիւն կ'ուզէ առնել... չէ, մինչև որ չըսես ըսելիքի՛ ողորմութիւն չեմ, տար:

Մարազկան. — Ձէ՛ որ քա ալ աղքատ մարդոց մէկն եմ. ապա, որ ըսեմ՝ ողորմութիւն կու տամ մէկ ուրիշ...:

Գարեգին. — Թէ որ ուրախալի բան է՝ կու տամ:

Մարազկան. — Ուրախալի տրամալի չեմ իմանար, քեզնից կը կախուի... ամբար հարստութեան տէր դարձեր ես այս վայրկեանս մէջ և չես իմանար... կ'ըսեմ քեզի թէ որ մէկ ուրիշին առաջ այս աղուն յանձնես ու ճամբայ դնես երթալ՝ որ ապահով ըլլամ թէ...:

Գարեգին. — Ի՞նչ ամբար հարստութիւն. ըսէ. ահա ուրիշին (կու տայ տղան՝ որ կը մեկնի), ըսէ...:

Մարազկան. — Սմբատ, դու հորդ մէկհատիկ որդին ես, թէ քեզնից դուրս օրիշ ալ կայ:

Գարեգին. — Ուրիշ ալ կայ. ինչո՞ւ կը հարցընես...:

Մարազկան. — Դուն մեծն ես, առ ջինեկն ես. թէ փոքրը:

Գարեգին. — Անդրանիկն եմ, ըսէ քնչ կայ...:

Մարազկան. — Ուրեմն ամբողջ հորդ հարստութիւնը քեզի կը մնայ այս վայրկեան:

նիս, վասն զի հայրդ Հրանդը մեռած է...
Գարս. և Յարո. — Ո՛հ, քնչ կ'ըսես, մի ըսաւ (Գարեգին վեր կը ցատքէ գոռալը ծնծկելով)։

Խաղակիցք. — (Կը սանձեն զԳարեգին) Ո՛հ, պարոն Գարեգին, ստաւ է, մի հաւատարմ Յարո. — Դուրս կորսուէ՛, անպիտան ծեր (կը հրմշտկէ զմտաբացկանն)։

Գարեգին. — Թո՛ղ, Յարո, թո՛ղ, մի վրնտեր... Ուսկից իմացար, ո՛վ ծեր (անձ. կանօք)...

Խաղակիցք. — Բազուցի ծանօթներ, բէա մէկը որ՝ երէկ հատեր էր քաղաքս՝ ինծի պատմեց. ես ինքս ալ Բազուցի եմ. ըսաւ որ փառաւոր թաղում կատարեցին ու ամէն աղ. քառի ալ մէկ մէկ ոտքի բաժնեցին... ես որ այնտեղ չէի՝ այն գիտաւորութեամբ հիմա քեզմէն ընդունեցալ մէկ ոտքի... Աստուած հորդ հոգին լուսաւորէ՛ (կը մեկնէ)։

Գարեգին. — (Յատօք) Ո՛հ, հայր իմ, հայր իմ, հայր իմ... հեռաւ աշխարհք... ո՛հ, հայր իմ...

Խաղակիցք. — Ո՛հ, պարոն Գարեգին, հանդարտէ... (կը նստեցնեն)։

Գարեգին. — (Տխուր՝ գոռալը խաղի սեղանին վրայ դրած) Ո՛հ, հայր իմ...

Սեպուռն. — Պարոն Գարեգին, մի արտմիւր, քաջաբերուէ, մանաւանդ թէ միւր. Թարուէ և ուրախացիր, որովհետեւ ուրիշին փասը քեզի շահ կը պատճառէ. յիշէ քիչ առաջ զուրցած խաղերդ. հորդ մահը զքեզ կը հարստացնէ... (ժածոսկ. — Խեղճ Սմբատ, լաւ է որ չիմանաս, բայց քնչպէս կարելի է...)

Գարեգին. — Է՛հ, Սեպուռն... կը ծաղրե՛ս զիս, գիտեմ... առիթը գտար... բայց ես նաև այս վայրկենիս ալ այս կը պնդեմ որ շիտակ էր. ըսածս... բնութիւնն զմարդ թող է ստեղծեր, թէ չէ. մարդու մը մահը լաւու քնչ պատճառ կայ... հայրս է՛ կը ցաւիմ, բայց միւս կողմանէ ալ կը մտածեմ՝ որ անմահ ստեղծուած չէր, արդէն օր մը չէ՛ օր մը պիտի մեռնէր, իրեն ալ օրք հասեր էր... բարեկամք, ալ չեմ ուզեր հիմա խաղալ, սուգի մէջ եմ, ներեցէր ինծի (կ'ուսգէ Էլիսէ՛, ընկերք կը քսեն զիւրք)։

Հրահատ. — Պարոն Գարեգին, տղայ մի ըլլար. այդքան կսկիծ սիրտդ կը մաշէ, կեանքդ կը կարճեցնէ։ Մենք ալ քեզի հետ մէկտեղ սուգի մէջ ենք հորդ մահուան հաւմար, ուստի թէ՛ մենք միսիթարուելու ե թէ՛ զքեզ միսիթարելու համար՝ պէտք է խաղեր. նիս շարունակենք, որ...

Տիրան. — Այո՛, այո՛, պարոն Հրահատ լաւ կ'ըսէ. մեր աղաչանքն մի անցնիր, պարոն Գարեգին, խաղանք, լաւ կ'ըլլայ. քեզի, որամուծիւնդ կը թեթեւայ։

Ներսէս. — Բան մը մտքես կ'անցնի, բարեկամք. մեր պարոն Գարեգինին ալ պէտք է շատ հաճոյ. անցնի... որ մենք՝ մեր զգացմունքը յայտնենք իրեն. մեր ցաւակցութեան. այսինքն՝ պարտիս մը խաղանք ՚ի պատիւ Գարեգինի ողորմած հորը հոգւոյն, այս պայմանաւ որ յաղթուողն հոգեհանգստի փառաւոր սեղան մը, հացկերոյթ մը տայ...

Խաղակիցք. — Շատ լաւ, շատ գեղեցիկ մտածութիւն, խաղանք, պարոն Ֆաբեգին։

Գարեգին. — Այո՛, այդ պայմանով միայն յանձն կ'առնեմ խաղալ... խաղանք... (կը սկսի խաղալ)։

Սեպուռն. — (ժածոսկ.) — Հայր մը տղան խաղալուն համար անշուշտ արտին ցաւէն օտարութեան մէջ կը մեռնի. որդին հորը մահուան սուգի տեղ՝ վայրկեան մը վերջը՝ հացկերոյթ մը տալու համար կը խաղայ... Ո՛հ, Աստուած, ահա Սմբատը...

ՏԵՍԻՆ ԵՐՐՈՐԻ

Աշախնքն և Սմբատ

Սմբատ. — (Տխուրեամբ ներս մտնելով) Բարե ձեզ, բարեկամներ. բարե, սիրելի Սեպուռն (ձեռք սեղմելով)։

Սեպուռն. — Ի՛նչ ունիս, Սմբատ, շատ տխուր կ'երևաս... Աստուծոյ բարին... քնչ լուր կայ...

Հրահատ. — (Նստած՝ խաղալով) Բարե եկած ես, պարոն Սմբատ, քնչ նոր լուր ունիս. շատ կանուխ գարձեր ես քանկէն, կ'երևի մի բան եղած ըլլայ։

Մմբատ. — Ոչինչ, պարոն Հրահա-
կանուի դառնալու պատճառն այն է՝ որ ես
աղղեն հրաժարականս առի՛ բանկի գիրքի-
տօրին, և արձակուրդ ստացայ...

Ամենքն. — Ինչո՞ւ, ինչ եղաւ...

Մմբատ. — Ոչինչ, բարեկամք, ոչինչ-
բայց ինչպէս բանկէն՝ այսպէս ալ վաղը
երեկոյին ձեզ ամենուզ պէտք է հրաժարա-
կան ողջոյնս տամ, և մեկնիմ՝ դէպ 'ի բա-
զու...

Սեպուհ. — Բազու... ինչո՞ւ, սիրելի
Մմբատ... շատ տխուր ես, այլայլած ես,
բան մը կայ...

Մմբատ. — Ինչպէս տխուր չըլլամ:
Սեպուհ. հայրս երեք տարիէն աւելի է որ
հեռացեր է, և երկու ամսէն աւելի է որ
իմէ նամակ չեմ ստացեր. սիրտս շատ կը
փափաքի զինքը տեսնել... ալ չեմ գիտե-
նար, պէտք է երթամ:

Սեպուհ. — Շատ լաւ, Մմբատ, ինչ
պատճառ կայ այդքան տխրելու. Բազու այն-
չափ հեռու չէ. ես ինքն ալ քեզի ընկերու-
թիւն կ'ընեմ և կ'երթեմք միասին, զուն
հայրդ կը տեսնես, ես ալ հօրեղբայրս, մեր
պարոն Մուշեղի հայրը:

Մմբատ. — Մուշեղի հայրը... ո՛հ,
մի ուզեր ինծի հետ զալ դժբախտ Սեպուհ,
ուրեմն չե՞ս խնայեր այսօր Մուշեղի հանդի-
պած չարիքը, ահաւոր վտանգը...

Սեպուհ. — Ո՛հ, ինչ չարիք, Մմբատ,
ինչ վտանգ... խնդրեմ զուրցէ, մի ծած-
կեր...

Մմբատ. — Սեպուհ, ծածկելէն ինչ
օգուտ, երբ արդէն վաղը ամբողջ Ռոստով
քաղաքը պիտի խմանայ... Գիտցիր ուրեմն՝
որ իմ բուն տերութեանս պատճառն ալ այդ
չախորդ դէպքն է... Մուշեղը, հօրեղբորդ-
դիզ բանտուած է...

Սեպուհ. — Մուշեղը բանտուած, ո՛հ,
բո՛ւ Մմբատ, բո՛ւ, ինչի՞, ինչ եղաւ...

Մմբատ. — Ահաւասիկ համառօտիւ իմ
գիտցածս: Արդէն զուր գիտէք որ Մուշեղ
երկու տարիէ 'ի վեր բանկին հաշուակալի
սենեկին գրագիրներէն մէկն է և միանգա-
սայն գանձապահի սենեկին անգամներէն մին:
Արդ, այս կէսօրին տեսնեմ յանկարծ խե-

ղաքարուածի պէս ձեռքերովն օկատ զլուին
ու ծնկուրները ծեծել ո՛ւ վայ տալ ինքն ի-
րեն, վրայ կը հասնինք այնտեղ գտնուող-
ներս՝ կը հարցընենք. « Ի՞նչ կայ, Մու-
շեղ, ինչ եղաւ »... « Բարեկամք իմ, կ'ըսէ
խեղճն ինքնիրմէն զուրս ելած, մեծ դժբախ-
տութիւն մը. չեմ գիտեր ինչ եղեր են,
բացուած է գորոցս ու վերցուած են մէջէն
8000 մանէթ թղթադրամ՝ տէրութեանս պի-
չիդներ, 30 հատ՝ ամէն մէկն հարիւր մա-
նէթանց... չեմ գիտեր ո՛վ վերցուցեր է »:
Շուտով մը լուրը կը հասնի Ազովսքի բանկի
գլխավորին, և առաջին դօրծը կ'ըլլայ Մու-
շեղը բռնել և այն սենեակը կնքել, մէջի
իրեղէնները քննութեան տակ ձգելու հա-
մար: Մենք ամէնքնիս որ այնտեղ կը գրա-
նուէինք՝ նախ արդիւնեցանք զուրս ելլելու
և յետոյ ոտքերնէս մինչև զլուս մերկացը-
նելով՝ մի առ մի փնտռեցին վրանիս, և
յետոյ ազատ թողին: Իսկ Մուշեղը բանտը
պահնցին և վաղը պիտի օկուի քննութիւնը...
Խեղճ Մուշեղ, ո՛ գիտէ ինչ նենգաւոր մար-
դու զո՛ւ գնաց... բայց յոյս ունիմ որ Աս-
տուծոյ արդարութիւնն չի թողուք որ անմեղը
զուր տեղ հալածուի...

Սեպուհ. — Խեղճ հօրեղբորդդիս
խեղճ Մուշեղ, անմեղ տեղ... (կոտ լաց):

Մմբատ. — Մի՛ լար, սիրելի Սե-
պուհ, վստահ եղիր Աստուծոյ արդարութեան
վրայ...

Աշուտ. — Իրաւ որ տարօրինակ բան.
մարդ չի կրնար կասկածիլ անգամ Մուշեղի
պէս երկտաւարդի մը վրան... անկարելի
բան... ո՛վ գիտէ թէ ո՛վ գողցեր է:

Տիրաւ. — Թէ որ զուր յայտնուի՝
մեծ չարիք չէ, խեղճ Մուշեղը կ'ազատի.
Իսկ եթէ չայտնուի՝ գուցէ անմեղը տասը
տարուան բանտի դատաւարացուի... Ռաւաց
սրէնքն խիստ է...

Գարեգին. — (Դուռը կը զարնոյի)
Թար՛, զուր կը զարնեն, տես ո՛վ է (Թարգ-
կը մեկնի):

Մմբատ. — Ես յոյս ունիմ որ քիւ-
սաց քննական խիստ աստեանն ալ իւր պաշ-
տօնը կատարելու յաշոյ՛ի ստոյգ յոյնացաւորը
գտնելով և այդ պատճոյն ենթարկելով...

Թարօ. — (Ներս մտնելով) Պարոն Սմբատ, փոշոյի մշտը քեզի նամակ մ'է բերեր. ահաւասիկ. զարագնի (ապահովագրեալ) է, ստորագրութիւն կ'ուզէ:

Սմբատ. — (Չարմանօք կը զննէ սև սոյն նամակը) Բազուէն... սոյն նամակ մը... ախ, չըլլայ թէ (կը պատռէ պահարանը փազնապատ և կը կարգայ) Ախ, հայր իմ, հայր իմ... (կը մարի կ'իյնայ Սեպուռի և Յարօյի գիրկը)...

Սեպուռ. — (Նայելով քորոյն վրան) Հօրը մահուան՝ Հրանդի մեռնելուն ապագիր ազգ մը... կը գուշակէի... խեղճ Սմբատ...

Թարօ. — (Չոքը ցանկելով Սմբատի և յետին) Պարոն Սմբատ, պարոն Սմբատ...

Սմբատ. — (Ալքերը քանակով և սառն նայելով) Ախ, հայր իմ... Գարեգին... հայրերնիս մեռեր է...

Գարեգին. — (Խաչի նստած տեղին անշարժ) Սմբատ, Սմբատ, արժեքներ, քով եղիր. ցաւալի լուր է. ես ալ լսեցի առաջոց...

Սմբատ. — (Միշտ սառն նայելով ապուշի նման) Ուսկից լսեցիր:

Գարեգին. — Բազուէն եկող մուրաց կան մը պատմեց:

Սմբատ. — Ուրեմն ծանօթ էր քեզի, Գարեգին, այդ լուրն... և դուն դեռ կը խաղաս և կ'ուրախանաս... Ա'հ, հայր իմ, հայր իմ (Մարելով կը գործի դարձեալ Սեպուռի և Թարօյի գիրկը, և վարագոյրը կը զոյգուի՝ երբ Սեպուռն և Թարօ կը զոյգեմ)

Սեպուռ. — Խեղճ տղայ, ազնիւ Սմբատ. ցաւ ցաւի վրայ:

Թարօ. — (Իմօտով. — Հնարքս շատ յաջող զնայց. ուրախ եմ):

Շարայարեյի

Ս Ո Ւ Ր Բ - Ղ Ա Զ Ա Ր

Ը Ս Ց

ԱՄԱՆԻ ՍԱՐԳԻՍԻ-ՆԵՐՍԵՍԻԱՆԻԱՅԻՈՑ Ի ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՐԵՆ, արդէն սկսած էր խոնարհիլ, երբոր մէջ վենետիկոյ շուրջ գտնուող ամենէն աւելի հրապուրիչ կողմակաց միոյն ափանց կը մօտենալմը: Կը հասնինք Ս. Ղապարու կղզին, այսինքն՝ « Կղզի Հայոց », որ իւր անունը առած է Մխիթարեան հրեանարաց կարգէն, որ վերջին երկու և կէս դարերէ ի վեր՝ առնոր Հիւրասէր տեղաբն են: Արդէն իսկ բազմաճառ Ժամօթ է այս Հայ-կաթողիկեայ Միաբանութեան արժանիքը: Այլ և այլ հանգամանօք օտարացած ի հայ հայրենեաց, ուր կարող չէին ազատօրէն հայկական հին գրաքութեան ուսումնասիրութեամբ՝ պարագիլ Միաբանութեան նախահարք, յետ ընդունելու կղզեմէս ԺԱ Հռովմայ հայրապետէն (յոյմի 1712), իրենց սահմանադրութեան հաստատութիւնը, փոխարուեցան ի Մոսկա. բայց երբ սա Թուրք վարչութեան ձեռքն անցաւ, արդէն իսկ Մխիթարեանք դէպ ի վենետոս

տանող ճանապարհին վրայ կը գտուէին. որպէս հասարակապետական վարչութիւնն յոյմի 1716 վիճակեց առնոց իբրեւ նոր բնակավայր՝ Ս. Ղապարու կղզին: Ինքն Մխիթար հապիւ՝ մի « Հայկազեան » լեզուի և մի այլ « Աշխարհարար լեզուի » բառարաններ թողուց. բայց յետոյ իսկոյն իրար յաջորդեցին Միաբանութեան անդամոց գրական բազմաթիւ երկերն:

Տարագրութեամբ հրատարակեցան դասընտիր երկոց, այսինքն՝ ճախնեաց Մասնեագրութեան մեծամասնութիւնը, և շատ ուրիշ գրուածք՝ ի մասին արեւելեան լեզուաց, և

Թուի թէ նեղիսկ ճշմարիտ՝ պր. Ամենք տեղեակ չէ Մի. Արքայ իւր բազմակողմանի նմանաց ազդեանքիս ազդեղիք է անդիպէ Երկոց: Ս.